

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փ. ԵՆԿՈՅԱՆ. Բոլշևիկյան կուսակցության ստրատեգիան ու տակտիկան օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և ֆաղաֆացիական պատերազմի ժամանակաշրջանում, «Հայաստան» հրատ., Երևան, 1979:

Լենինյան, բոլշևիկյան կուսակցության բազմահարուստ փորձի ուսումնասիրումը, մեկնաբանումը, նրա ստրատեգիայի ու տակտիկայի վերլուծությունը ոչ միայն գիտնականաչափական նշանակություն ունի, այլև անգնահատելի դեր է կատարում աշխատավորության, երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում: ՄՄԿ պատմության խորը, համակողմանի ուսումնասիրումը խիստ արդիական է ու հրատապ, ունի համաշխարհային պատմական նշանակություն:

Այդ տեսակետից արժեքավոր է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի ՄՄԿ պատմության ամբիոնի նախկին վարիչ Փ. Ի. Ենգոյանի «Բոլշևիկյան կուսակցության ստրատեգիան ու տակտիկան օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և ֆաղաֆացիական պատերազմի ժամանակաշրջանում» մենագրությունը, որը, ցավոք, վերջինը դարձավ նրա գիտական աշխատությունների շարքում: Հիշյալ աշխատությունը սոսկ տվյալ հարցի պարզ շարադրանքը չէ, այլ այն իր մեջ ներառել է այն լավագույնը, արժեքավորը, ինչին հասել էր հեղինակը իր ամբողջ գիտահետազոտական և մանկավարժական գործունեության ընթացքում:

Հեղինակը հմտորեն ցույց է տվել և գնահատել այն տիտանական, հիրավի վիթխարի, անսահման էներգիան, համառ կամք ու կոռով պահանջող աշխատանքը, որ կատարել է կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ երկրի համար օրհասական օրերին՝ ֆաղաֆացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի տարիներին: Կուսակցությունը, մշակելով ճիշտ ստրատեգիա և տակտիկա, կարողացել է հմտորեն օգտագործել իմպերիալիստական պետությունների միջև եղած հակասությունները և պաշտպանել երիտասարդ սովետական հանրապետությունը, աշխարհում առաջին սովետական իշխանությունը, որի պահ-

պանումն ուներ համաշխարհային պատմական մեծ նշանակություն:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից և վերջաբանից, որոնցում հեղինակը փաստական հարուստ նյութի, հատկապես արխիվային նոր փաստերի հիման վրա ցույց է տալիս կուսակցության ստրատեգիան ու տակտիկան թե՛ ռազմական, թե՛ ֆաղաֆական և թե՛ տնտեսական բնագավառներում՝ դրանք կապելով միմյանց հետ: Հեղինակն օգտագործել է ՄՄԿ Կենտկոմի արևմտյան մարտիչ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվը, Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական արխիվը, «Պրավդա» թերթի 1918—1920 թվականների համապատասխան հոդվածները:

Աշխատությունում հանգամանորեն ներկայացված է այն մեծ աշխատանքը, որ կատարել է կուսակցությունը սովետական իշխանության առաջին իսկ օրերից՝ հին բուրժուական պետական մեքենան տապալելու և նոր, պրոլետարական պետական ապարատ ստեղծելու ուղղությամբ: Հատկապես լավ է ցույց տրված արտակարգ հանձնաժողովի, նոր ժողովրդական դատարանի, կարմիր բանակի ստեղծման ուղղությամբ կատարված հետևողական, ամենօրյա աշխատանքը, բացահայտված է սահմանադիր ժողովի հրավիրման և ցրելու խնդիրը:

Աշխատության երկրորդ գլխում պրոֆ. Փ. Ենգոյանը հանգամանորեն է բնութագրել կուսակցության վարած գաղափարական աշխատանքը գյուղում և ֆաղաֆում, կուսակցության ստրատեգիան և տակտիկան, մենշևիկներին, էստեներին ժողովրդի աչքում մերկացնելու նրա կուրսը: Շնորհիվ բոլշևիկների վարած հետևողական ֆաղաֆականության, համոզիչ աշխատանքի, ժողովրդական լայն մասսաները չզնային էստեների և մենշևիկների ետևից, այլ դասակարգային բնագավառում հասկացան նշմարտությունը, մերժեցին էստեների, մենշևիկների բոլոր

փորձերը հատկապես գյուղացիներին իրենց կողմը գրավելու ուղղությամբ և դատապարտեցին նրանց ու մեկուսացրին:

Աշխատության հաշտված բաժիններից է նաև երրորդ գլուխը, որը կոչվում է «Լենինյան ազգային ծրագրի իրականացման ուղղությամբ բոլշևիկյան կուսակցության և սովետական կառավարության տակտիկան»: Այստեղ լուսաբանված է Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների համար լենինյան ազգային ծրագրի, ազգային հարցի լուծման, իրականացման նշանակությունը, իրավացիորեն ազգային հարցը դիտվում է որպես սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և, առավել ևս, երկրում սոցիալիստական շինարարության, սոցիալիզմի կառուցման, հաղթանակի կարևորագույն պայմաններից մեկը: Լավ է ցույց տրված հատկապես ֆեդերացիայի սկզբունքով սովետական հանրապետությունների միավորման անհրաժեշտությունը, պատմությունը, լենինյան ծրագրի հաղթանակը: Տեսականորեն հիմնավորված է լենինյան ազգային ծրագրի համաշխարհային պատմական նշանակությունը, մեր երկրի պատմության օրինակով ցույց է տրված ազգային հարցի լուծման լավագույն ձևը: «1918—1920 թթ.,—գրում է Փ. Նեգոյանը,—լենինյան ազգային ֆաղափականության իրականացման ուղղությամբ բոլշևիկյան կուսակցության և կառավարության կողմից ընդունված որոշումների կենսագործմամբ սկիզբ դրվեց ազգերի ու ժողովուրդների հետազգա ծաղկմանն ու բարգավաճմանը» (էջ 126):

«Բոլշևիկյան կուսակցության տնտեսական ֆաղափականությունը» գլխում ներկայացված է կուսակցության տակտիկան գյուղում, միջակ գյուղացու նկատմամբ կուսակցության վարած նոր կուրսը, կուսակցության սահմանափակման ֆաղափականությունը, չփվորական կամիտների խաղացած դերը գյուղում սոցիալիստական վերափոխությունների կատարման ուղղությամբ: Գնահատելով չփվորական կամիտների խաղացած դերը՝ հեղինակը միանգամայն իրավացիորեն գրում է, որ նրանք, դառնալով պրոլետարիատի դիկտատուրայի հենակետերը գյուղում, ծավալեցին այնտեղ տնտեսական, ֆաղափական և կազմակերպչական խառն աշխատանք: Հարուստ փաստական նյութերի հիման վրա գրքում ցույց է տրվում, թե ինչպես չփվորական կամիտները տնտեսական խնդիրներից բացի կատարել են նաև ֆաղափական խնդիրներ՝ պայքարելով սովետները կուսակցային ու հակահեղափոխական տարրերից մաքրելու համար, երկրի պաշտպանության ամրապնդման ուղղությամբ և այլն: Նույն գլխի երկրորդ մասում հանգամանորեն խոսվում է սոցիալիստական շինարարության առաջին փուլերի մասին, երկրում գոյություն ունեցող հինգ սոցիալ-տնտեսական կացութաձևերի և նրանց միջև մղված պայքարի մասին:

Հեղինակը այս բաժնում մեծ տեղ է տվել Վ. Ի. Լենինի «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության գլխավոր, այսօրվա համար էլ խիստ այժմեական հրատապ հարցերի մեկնաբանմանը, կարևորությանը, ընդգծելով, որ այդ աշխատությունը դարձավ կուսակցության համար ծրագրային փաստաթուղթ և ուղեցույց՝ տնտեսական շինարարություն ծավալելու, սոցիալիզմի կառուցման գործում:

Այնուհետև հեղինակն անդրադարձել է ազմական կամուրիզմի ֆաղափականությանը, հիմնավորել այդ ֆաղափականության խիստ անհրաժեշտությունը՝ կապված ֆաղափացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի հետ: Միասամանակ նա ֆենադատել է բուրժուական գաղափարախոսների այն տեսակետը, ըստ որի մեր երկրում ժամանակավորապես անցկացված այդ ֆաղափականությունը դիտվում է որպես միջոց՝ սոցիալիզմի կառուցումը արագացնելու համար: Խոսելով այդ մասին, հեղինակը գրում է. «Կյանքն ապացուցեց, որ այդ տեսակետներն անհիմն են, չեն բխում սոցիալիզմի կառուցման կոնկրետ իրադրության գիտական վերլուծությունից, տարածվում են սովետական իշխանության նկատմամբ թշնամաբար տրամադրված տարրերի կողմից» (էջ 174):

Աշխատության հիմնգերբորդ գլուխը նվիրված է բոլշևիկյան կուսակցության ռազմական ստրատեգիային ու տակտիկային ֆաղափացիական պատերազմի և ինտերվենցիայի տարիներին: Հեղինակը վեր է լուծել և մեկնաբանել ռազմական ստրատեգիա և տակտիկա հասկացությունները, նրանց փոխադարձ կապը: Այնուհետև նա համառոտ շարադրել է այն ռազմական գործողությունները, որոնք ծավալվել են ֆաղափացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի տարիներին: Գլխում ցույց է տրված երկրում սոցիալիզմի կառուցման գործում կուսակցության VIII համագումարի խաղացած դերը, կուսակցության երկրորդ ծրագրի ընդունման նշանակությունը:

Աշխատության վերջում Փ. Նեգոյանը, ելնելով ամբողջ նյութի շարադրանքից, անում է կարևոր եզրահանգում. «Օտարերկրյա ինտերվենտների և ներքին հակահեղափոխական ուժերի դեմ տարած հաղթանակում լավագույն ֆենությունը բունց բոլշևիկյան կուսակցության ինչպես ֆաղափական, այնպես էլ ռազմական ստրատեգիան» (էջ 236):

Փ. Նեգոյանի գիրքը գրված է կուսակցականության ամուր դիրքերից, շեմ հայրենասերի, ֆաղափացու և կուսակցության գործին: Նրա գաղափարներին նվիրված կուսակցական աշխատողի դիրքերից, երկրի, կուսակցության հաղողություններով ապրող մարդու դիրքերից: